

Կարմիր կամուրջ. — Le Pont-Rouge.

124. Յարևմտից հարաւոյ Սանահնի յայն կողմն (յահեակ) Զորոյգեւոյն կայ Օյ-ն կամ Ո-ղ-ն-ղ-ր գեօղ, յորմէ էր մեծ խմաստասէր հայրապետն Յովհան յԵլն Է և 'ի սկիզբն Ը դարու. մահարձան հոյակապ կայ 'ի գեղջն և կարծի Սմբատայ Բագրատունւոյ լինել նահատակելոյն 'ի Դուինի. իսկ գերեզման հայրապետին որ և ուխտատեղի՝ կայ 'ի Վ-ի-ղ-ա-ֆ-ր տեղւոջ մերձ յԱրդ-ի գեօղ, յարևմտից Օձնայ: — Ի հիւսիսոյ Արդուայ առ Ագ-ի-ա-ֆ գիւղիւ կայ հռոմայրի Ս. Նշան ուխտն, քարայրք և եկեղեցիք. հանդէպ նորին աւերակք Կ-ա-ի-ի բերդի. մերձ նոցին Փ-ի-բայր անուանի մենաստան, կանգուն եկեղեցեաւ շինեալ 'ի կէս ԺԲ դարու. և առ Ագ-ի-ֆ գիւղիւ 'ի հիւսիսոյ Օձնայ՝ աւերակք ապարանից: — Գաւառս Պուռչալուայ մասն է ՍՕՄԽԻԹԻ որ ըստ Վրաց նշանակէ զՀայս, որպէս թէ Վրահայք գաւառ իշխանութեան նոցին (1):

125. Գ. ԿԻՒՄՐԻ կամ ԱՂԵՔՍԱՆԴՐԱԲՕԼ, որ սահմանի յարևմտից Ղարսաւ, 'ի հիւսիսոյ և յելից Պուռչալուաւ, 'ի հարաւոյ՝ Հայկական նահանգաւ. և ունի զգաւառս ինչ Գուգարաց և զմիջին հիւսիսային կողմն Այրարատայ. և բնակիչս 40,000: Հիւսիսակողմն գաւառիս 'ի հարաւոյ Լեալվար լերանց՝ է վիճակն ԼՕՌԻ, 'ի հին ՏԱՇԻՐՍ, ոռոգեալ յարևմտեան կամ 'ի սկզբնաւոր վտակաց Տեղետայ (Զորոգեւոյն), որք են Ձ-ն-ի-ի-ր-ա- և Ճ-ի-վ. Ժառանգութիւն սա Գուշարայ Հայկազնոյ առ Վաղարշակաւ լեալ, լուսաւորեցաւ կրկին քարոզութեամբ Ս. Մեսրովպայ. և Թագաւորք Բագրատունիք 'ի Ի և ԺԱ դարս պայազատեցին 'ի սմա, եդեալ զաթոռ իւրեանց 'ի բերդաքաղաքն ԼՕՌԻ կամ ԼՕՌԻ, պատեալ 'ի ՃԼԿԻԿԱ և 'ի Ձ-ի-ն-ի-ի-ի-ր գեւոց և հզօր պարսպաւք, որոց միջավայրն աւերակ է ամայի. Գուրգէն որդի Աշոտայ Ողորմածի նախ ժառանգեաց զսա, և զնի 'ի Վրաց Կորիկէ կոչիւր, յայն անուն և Թագաւորութիւնն կոչեցաւ Կորիկեան. բայց սերունդք նորա զրկեցան 'ի Վրաց, և ԻԺԲ և ԻԺԴ դարս Թագաւորէին 'ի կողմանս Զորոգեւոյ և Խաղախայ: Այժմեան գլխաւոր տեղի վիճակին է Ճ-ի-ա-լ-օ-ղ-ա- առ Ճ-ի-ա-լ գեւով որ նոյն ինքն է Ճիլկա: Ոչ սակաւ մնացուածք եկեղեցեաց և շինութեանց են և յայսմ վիճակի. յորոյ հարաւոյ ձգի ԲԱՄԲԱԿԻ վիճակ յանուն երկայնաձիգ լերանցն, որ Թուին լերինքն ԿԱՆԳԱՐՔ գաւառի Գուգարաց, անջատեալք Այրարատայ. գետ համանուն անցանէ 'ի հարաւոյ, և յայնմէ նորին որ է 'ի հարաւոյ՝ Գ-ա-ֆ-ի-ի-ն գլխաւոր գեօղ վիճակիս. յորում վասն լեռնակոհակ անհարթութեան երկրին՝ սակաւ են գեօղք. գլխաւոր լերինքն ընդ մէջ Լօռւոյ և բամբակի գեւոյ՝ Պ-ի-ղ-ա-ֆ կոչին. իսկ հարաւոյ աւելակողմանն ընդ մէջ Կիւմրոյ և Այրարատայ՝ Գ-ա-ր-ա-օ-ղ-ա, յորում և անցք են Ճանապարհի յ'7340' բարձու:

126. Բուն վիճակն ԿԻՒՄՐԻ յելից կայ Ախուրեան գեւոյ, 'ի հիւսիսոյ Արագածու, և 'ի հարաւոյ Բամբակայ, և մասն է Շիրակ գաւառի (38). քաղաքն ԿԻՒՄՐԻ յեզր գեւոյն կայ 'ի վերոյ քան զՊաշ Շօրեկել լերս չորիւք ժամուք. գեօղ անշուք էր տեղիս յառաջ քան զքսան ամ. և 'ի դաղթականէն Հայոց եկելոց 'ի Կարուց և 'ի Պայէզիտոյ շինեցաւ քաղաք ընդարձակ 'ի բարձրաւանդակի 4520'. և յանուն գըշ-

(1) Զգաւառս զայս և զՀռչակաւոր վանորայսն մանրապատում տեղագրեալ առաջնորդին Հաղբատայ բանասէր Վարդապետին տեառն Սարգսի Ջալալեանց, և տպագրութեամբ հրատարակեալ է յամին 1842 'ի Տփխիս: